ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 25/08

«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության
խորհրդի նիստի

ք. Երևան 21 նոյեմբերի 2025թ.

Մասնակիցների ցուցակ՝

1. Անդրանիկ Ալեքսանյան
2. Աննա Կարախանյան
3. Արամ Վերդյան
4. Իգոր Մկրտումյան
5. Կատարինե Գևորգյան
6. Միսակ Խաչատրյան
7. Նարինե Դերձակյան
8. Վահան Հովսեփյան
9. Վեսմիրա Հարությունյան
10. Քրիստինա Հակոբյան

Նիստին մասնակցում էր նաև կազմակերպության անդամ Ռուբեն Մուրադյանը:

Նիստը նախագահում էր Իգոր Մկրտումյանը: Նիստի քարտուղար ընտրվեց Քրիստինա Հակոբյանը: Օրակարգի նախագծի վերաբերյալ հնչեցին առաջարկություններ: Արդյունքում հաստատվեց հետևյալ օրակարգը՝

Օրակարգ՝

1. **Մելիք Մանուկյանին «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպությանն անդամագրելու մասին**
2. **Ինտերնետի ազատության հնարավոր սահմանափակումների հետ կապված հարցերն ուսումնասիրելու նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու մասին**
3. **«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության խորհրդի 2023 թվականի փետրվարի 23-ի N 7Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**
4. **«Բետանեթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության որպես «.am» և «.հայ» դոմենային անունների տիրույթների ռեգիստրարի կարգավիճակը դադարեցնելու մասին**
5. **«Հայաստանի օպերատորների միություն» հասարակական կազմակերպությունից դուրս գալու առաջարկի մասին:**

1. **Մելիք Մանուկյանին «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպությանն անդամագրելու մասին**

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ Քրիստինա Հակոբյանը, ով տեղեկացրեց մասնակիցներին, որ ստացվել է դիմում կազմակերպությանն անդամագրվելու խնդրանքով: Դիմումի քննարկումից հետո առաջարկվեց այն բավարարել: Առաջարկությունը դրվեց քվեարկության և ընդունվեց միաձայն:

Որոշում՝ ***1. Բավարարել Մելիք Մանուկյանի դիմումը և ընդունել նրան որպես «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության անդամ:***

2. **Ինտերնետի ազատության հնարավոր սահմանափակումների հետ կապված հարցերն ուսումնասիրելու նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու մասին**

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ Քրիստինա Հակոբյանը՝ նշելով, որ կազմակերպության անդամ Ռուբեն Մուրադյանը բարձրացրել է ինտերնետի ազատության հնարավոր սահմանափակումների հետ կապված որոշ հարցեր, որոնք դիտարկվել են խորհրդի կողմից դեռ նախորդ նիստից հետո տեղի ունեցած աշխատանքային քննարկման ընթացքում: Այդ աշխատանքային քննարկման արդյունքների հիման վրա առաջարկվում է ստեղծել աշխատանքային խումբ և հաստատել աշխատանքային խմբի կազմը:

Ելույթից հետո տեղի ունեցած քննարկման ընթացքում դիտարկվեց նաև աշխատակարգ ունենալու հարցը:

Քննարկման արդյունքում կազմակերպության խորհուրդը ձայների 9 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ հարաբերակցությամբ (խորհրդի 1 անդամ չի մասնակցել քվեարկությանը) որոշեց՝

Որոշում՝ ***1. Ստեղծել աշխատանքային խումբ ինտերնետի ազատության հնարավոր սահմանափակումների հետ կապված հարցերն ուսումնասիրելու նպատակով:***

2. Հաստատել աշխատանքային խմբի կազմը՝

1) Ռուբեն Մուրադյան - կազմակերպության անդամ (աշխատանքային խմբի ղեկավար),

2) Քրիստինա Հակոբյան - կազմակերպության խորհրդի փոխնախագահ,

3) Վահան Հովսեփյան - կազմակերպության խորհրդի փոխնախագահ,

4) Աննա Կարախանյան - կազմակերպության խորհրդի անդամ,

5) Քրիստինե Գյոնջյան - կազմակերպության խորհրդի անդամ,

6) Սամվել Մարտիրոսյան - կազմակերպության անդամ,

7) Արթուր Վարդերեսյան - կազմակերպության անդամ,

8) Անի Սիմոնյան - կազմակերպության անդամ:

3. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության խորհրդի 2023 թվականի փետրվարի 23-ի N 7Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

Նիստի մասնակիցներին ներկայացվեցին կազմակերպության խորհրդի կողմից ստեղծված արագ արձագանքման աշխատանքային խմբի աշխատակարգում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը և բուն փոփոխությունները: Քննարկման արդյունքում կազմակերպության խորհուրդը ձայների 9 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ հարաբերակցությամբ (խորհրդի 1 անդամ չի մասնակցել քվեարկությանը) որոշեց՝

Որոշում՝ ***1. Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության խորհրդի 2023 թվականի փետրվարի 23-ի «Արագ արձագանքման աշխատանքային խմբի աշխատակարգը հաստատելու մասին» N 7Ա որոշմամբ հաստատված հավելվածում՝ արագ արձագանքման աշխատանքային խմբի աշխատակարգում (այսուհետ՝ Աշխատակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները՝***

1) Աշխատակարգի 7-րդ կետից հանել «՝ միաժամանակ ներկայացնելով Աշխատանքային խմբի եզրակացության նախագիծը» բառերը,

2) Աշխատակարգի 8-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«8. Աշխատանքային խմբի անդամներն ուսումնասիրում են ներկայացված նյութերը, տեղեկատվությունը և Աշխատանքային խմբի ղեկավարին ներկայացնում են իրենց կարծիքները: Ներկայացված կարծիքների հիման վրա Աշխատանքային խմբի ղեկավարը պատրաստում է Աշխատանքային խմբի եզրակացության նախագիծը և դնում քվեարկության: Աշխատանքային խմբի անդամները ներկայացված նախագծին քվեարկում են կողմ կամ դեմ: Աշխատանքային խմբի անդամն իրավունք ունի չքվեարկել և ներկայացնել Աշխատանքային խմբի եզրակացության այլ նախագիծ: Այդ դեպքում Աշխատանքային խմբի ղեկավարը պարտավոր է քվեարկության դնել առկա բոլոր նախագծերը:»,

3) Աշխատակարգի 10-րդ կետում «48» թիվը փոխարինել «72» թվով:

4. «Բետանեթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության որպես «.am» և «.հայ» դոմենային անունների տիրույթների ռեգիստրարի կարգավիճակը դադարեցնելու մասին

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ Քրիստինա Հակոբյանը, ով ներկայացրեց «Բետանեթ» ՍՊԸ-ի դիմումը (որով վերջինս խնդրում է 2025 թվականի դեկտեմբերի 1-ից դադարեցնել իր որպես «.am» և «.հայ» դոմենային անունների տիրույթների ռեգիստրարի կարգավիճակը) և այդպիսի դիմումի ներկայացման պատճառները:

Քննարկման արդյունքում կազմակերպության խորհուրդն միաձայն որոշեց բավարարել դիմումը:

Որոշում՝ ***1. Դադարեցնել «ԲԵՏԱՆԵԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության որպես «.am» և «.հայ» դոմենային անունների տիրույթների ռեգիստրարի կարգավիճակը:***
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի դեկտեմբերի 1-ից:

5. «Հայաստանի օպերատորների միություն» հասարակական կազմակերպությունից դուրս գալու առաջարկի մասին

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ Արամ Վերդյանը: Նա հիշեցրեց ներկաներին, որ «Հայաստանի օպերատորների միություն» ՀԿ-ից դուրս գալու մասին առաջարկն արդեն քննարկվել է այս տարվա ընթացքում: Այն ժամանակ առաջարկը մերժվել է, սակայն «Հայաստանի օպերատորների միություն» ՀԿ-ն պետք է դիտարկեր «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ին անդամագրվելու հարցը: Առ այսօր «Հայաստանի օպերատորների միություն» ՀԿ-ից անդամագրվելու մասին դիմում չի ստացվել:

Քննարկման ընթացքում հնչեցին տարբեր կարծիքներ: Հարցին անդրադարձավ նաև Քրիստինա Հակոբյանը, ով ներկայացնում է «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ն «Հայաստանի օպերատորների միություն» ՀԿ-ում և արտահայտեց իր տեսակետը:

«Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի՝ «Հայաստանի օպերատորների միություն» ՀԿ-ից դուրս գալու մասին առաջարկը դրվեց քվեարկության և ձայների 4 կողմ, 2 դեմ, 4 ձեռնպահ հարաբերակցությամբ չընդունվեց:

Որոշում՝ ***1. Մերժել «Հայաստանի օպերատորների միություն» հասարակական կազմակերպությունից դուրս գալու առաջարկը:***

Նիստի նախագահող՝ **Իգոր Մկրտումյան**

Նիստի քարտուղար՝ **Քրիստինա Հակոբյան**